49. ԿՐԱԿՈՏ ՈՍՊ

Կըլլի-չըլլի, թագավոր մի կըլլի. ըս թագավորին իրեք տղա կըլլի. մի օր վասիաթ ըրըց. «էդի դարս է, ես տի վախճանիմ, մե՛նծ տղաս, դու կնստիս իմ տեղ. օրթանճա՛ տղաս, խազնատար կըլլիս. պուճո՛ւր տղաս, պուճո՛ւր տղաս, դուն էալ հարամ քեահեասի կըլլիս: Իրեք հատ էալ քոր ունիք. հեր վեվ օ սըֆտա կուգա ուզե, կուտաք»:

Թագավորը վախճանավ, տարին հող ու գերեզման էրին, դարձան էկան, իրանց տեղը նստան վախտ մի: Պուճուր տղան էջավ, դռան աթոռին վրա նստավ. էղավ հարամ քեահեասի:

Ըդի հայավ օ պարկել ժըմուն՝ մե մի դուռը թըխկ-թըխկ թխրցոց, ըդի տեսավ դերվիշ մի մտավ ներս, ըսըց. - Բարև քիզի, հարա՛մ քեահեասի:

- Աստծու բարին քիզի, դերվի՛շ բաբա, - ըսըց:

- Թագավորը վե՞ր տեղ կը նստի:

- Էաս վերի դաթը:

Դերվիշ էլավ վեր. - Թագավորը ապրած, բարև քիզի:

- Աստուծո բարին քիզի, դերվի՛շ բաբա:

- Թագավորը ապրած, քիզի չութ մի խոսք կա, չիս դժարնար նը՝ ըսիմ:

- Ըսէ:

- Աստուծո հրամանովը, հայրապետնուն դավլովը քու մենծ քոր տուր ինձ:

- Գնա՛, իմ պապ տահա էաս օր է մեռեր:

Դերվիշ էջավ օրթըլըխի խաթ, խազնապարին գլոխ տվեց. - Աստուծո հրամանովը, հայրապետնուն կանոնովը, մենծ քորդ ինձ տ'իտաս:

- Գնա, դերվի՛շ բաբա, պապս նոր է մեռեր, - ըսըց:

Էջավ վեարի խաթը, գլոխ տվեց հարամ քեահեասուն. - Բարև քիզի, հարա՛մ քեահեասի:

- Աստուծո բարին, դերվի՛շ բաբա:

- Աստծու էմրովը, հայրապետնուն կանոնովը մենծ քորդ ինձ տ'իտաս:

Պզտիկ տղան ըսոր ծեռացը բռնեց. - Աստծու էմրով, հայրապետնուն կանոնով որ ըսիր՝ տվածս տված է:

Գցին մորը քով, չուպուխ, դայվե խմեցին:

Էլավ մենծ քրոջը սնտուկը բացավ, հալավները-ճեհեզները համրեց, քրոջը ձեռքեն բռնեց, տվեց դերվիշի:

- Հայտե, առ գնա, - ըսըց, - քու հախլուն:

Դերվիշը «մնըս բարով» ըսըց, առավ, գնըց:

Մեկեալ իրիկունը ավլա պառկել ժմուն՝ դուռը թխրցուցին. ավլա ուրիշ դերվիշ մի էկավ, հարցոց, ավլա էլավ թագավորին քով, օրթանճա աղջիկը ուզեց. թագավորը չտվավ. ավլա էջավ խազնատարին քով, խազնատարն էալ չտվավ. ավլա էջավ ցած, պուճուր աղբերը տվավ:

Մեկեալ օրը ավլա դուռը թխըցուցին, հայավ օ ավլա դերվիշ է, էկած է պուճուր քուր կուզե. ավլա աղբրտանքը չտվին, պուճուր աղբեարը պուճուր քուրը տվավ՝ պուճուր դերվիշին:

Թագավորը ըսըց. - Իրեք օր է մեր պապը մեռեր է, էրթըք, տեսնըք մեր մամը ինդո՞ւր է:

Գըցին տեսան, իրանց մամը խզմեթ կինե, ըսին. - Մա՛մ, թող մեր քորվըտանքը խզմեթ ինին:

- Քորվըտանքդ չտայիք նե՝ խզմեթ էզեթ կինեին:

- Վե՞վ է տվեր, մամո:

Ձեր պուճուր աղբեարը տվավ, վե՞վ տի տա:

Հոտի աղբերտանքը լեզվով կռիվ կինին:

- Որ խոսքը հարամ քեահեասուն է, - կըսին, - մինք չիք կենար:

Էլան էրկու աղբեարը, ծիանը հեծան, ընկան, գըցին:

Պուճուր աղբեարն էալ ըսըց. - Դուք օ չիք ընըր, ես հեչ չիմ կենա:

Շատ գցին, քիչ գցին: Աստված գիտե, աղբրիմ վրա էջան մութուն, թագավորը հոտի ըսըց. - Փառք քեզ Աստվա՛ծ, մեր աղբոր ափուցը փախանք, արի հաց ուտենք:

Հացը հանեցին օ պտի ուտեին, մեմ՝ էալ պուճուր աղբեարը հասավ. - Բարև ծիգի, աղբրտանք, - ըսըց:

Բարև չառին:

Հոնի սահաթ մի պառկան, էլան պուճուր աղբոր պառկած թողին, իրանք հեծան, գընցին:

Հարամ քեահեասին արթընցավ՝ օ մարդ չկա. «Եա՛, Աստված» ըսըց, գնըց հասավ:

Ընոց հետ քառսուն օր գնըց. հեչ քուն չէղավ, օ աղբըրտանքը չթողին, փախչին: Տասվերկու սահաթ գընցին. մեկ տեղ էջան:

Հոտի պուճուր տղեն քնավ, աղբրտանքը հեծան, գընցին:

Տղան արթընցավ օ արևը վրան էկեր, աղբեար չկա, գոռ տվավ քշեց ձինը, ձիու սաղրին թիզ մի փրփուր կապեց, հասավ աղբրտոցը:

Աղբրտանքը նստուկ էին չայիրիմ օրթըլըխ տեղը, չորս դին լեառ է, ձիանք սեապեցին, պարկան քնան: Գիշերվա սահաթի չորսն էր, մի սև ամպ էլավ, գըռգռուկը դրեց, էանանկ մեկ արզև մի տվեց էկավ օր՝ էադ լեառտանուն ջրերը կուգար էադ չայիրի մեջ, ձիանը մացին մլի ջրերու մեջ, իրանք մեկ-մեկ ապա քաշեցին գլխնին, պարկան:

Պզտիկ տղի ձինը հռհռաց. էկավ տղին քով, տղան արթընցավ՝ օ ջրին մեջ է մնացեր, էլավ, ըսըց. - էրթըմ քիչմ չոր փեատ բերիմ, նայիմ կրակ ինիմ. աղբրտանքս էլլին, վրանին չորցնեն:

Գնըց բերեց փեատ, չախմախը զարկեց, խավը թրջեր էր, կրակ չէր առներ, զինելեն քարը կոյրավ, թմավ:

Ըս տղան արղընին իրուր կը զիներ. կը մսեր:

Տումանը էջավ վրան, հովը կը փչեր, տումանը էլավ, հայավ օ կրակ մի կէրևա լեառան գլոխը. սահաթը հայավ օ գիշերվա կեսն է:

- Կրակը մոտ է, - ըսըց, - էրթմ կրակ բերեմ:

էլավ եոխուշին կեսը, տեսավ հալվոր մի նստեր է հոնի:

- էաղ ի՞նչ բան է կինիս, հալվո՛ր, - ըսըց:

- Գիշերը գիշեր կինիմ, ցորեկը՝ ցորեկ, կծիկը կը թոփիմ լոսնա:

- Տե կրակը քանի՞ սահաթ կա:

- Գիշերվա հինգ սահաթ կա, տե կրակն էալ հինգ սահաթ:

- է, ի՞նչ կըլլի, քիզի շատ կաղաչեմ, կծիկը վեար դիր, չկըծկիս, էրթըմ կրակ առնիմ, գամ անտա կծկե:

- Չըլլի՛ր, այ որդի՛, հայվանները, թռչունները, մարդիկը խորթլանմիշ կըլլին, տի կծկիմ:

Առավ կծիկը ափուցը, գլդրեց եամաճն ի վեար. գնը օ եռսունը ինը հատ դև, քառսուն անկե պղինձը կրակին վրա դրած, էփած է, մեկելնին հոտ չէ օր թմին, պղինձը վեար առնին. էնոր համար անոթի պարկած՝ քնած ին:

Տղան էկավ պղնձին քով, մեկ ատըմ ըսդին նետեց, մեկ ատըմ ընդին, վեար առավ, կրակը առավ, էջոց գետինը, պղինձը դրեց գետինը. օլրվավ օ էրթը, դևերուն մեկ աղբեարը ըսը՝ էլեք:

Դևերը էլան. հովլաթմիշ կինին, դևերու զարպեն քամին էլավ, կրակը առավ գնը տղի ափուցը:

Դևերը ետ օլրվան, էկան պղնձի քով, տղան կինե էկավ, պղինձը վեար առավ: Դևերը վախստաննուն լեզուստանը կապվավ:

Տղան ըսը. - Ինձիս մի մոտենաք, մի խանչարով քուլլինուդ գլոխը կը կըրիմ:

- Կը խնդրուիք քինե, մենծ աղբեար, մենք քառսուն օր է անոթի իք, պղինձը վեար առնիս, մենք ուտիք:

Տղան վեար առավ, դևերը մեկ դիուն կուտեին, մեկ դիուն տղուն խոսուքին կինեին. - Մենծ աղբեա՛ր, - ըսին, - մեր մի աղբեարը գցեր է էրկըթե չիվիի:

Հայան օ մեկ դև չիվիստանը շալկեր կուգա:

- Ի՞նչ տ'էնիք էաս չիվիստանը, - հարցոց տղան:

- Թագավորին աղեկ աղջիկ մի կա, չիվիստանը զարկինք պետենը, էլլըք աղջիկը բերըք:

Չիվիստանը շալկեցին, գցին պետենի տակ էջոցին:

Տղեն փամբուկով մեկ մեկ հատ կը զիներ մերմեր քարին. ներտիվան շինեց. էլավ դիները, դևերուն ըսը. - Մեկ մեկ էկեք:

Վեվ օ էկավ, գլոխը կըրեց, քառսունին էալ կըրեց:

Ըսը. - Ես էկա հոս հարամլըխը մտնիմ, հայիմ՝ ինչ կա:

Գնը օ թագավորին աղջիկը պարկուկ է, աջուկ թևը բաց էր, ճըթնուկան ալմաստ քարե մաննին հանեց. գնը մեկեալ դուռը բացավ, տեսավ հոնի էալ մի աղջիկ կա պարկուկ. ընոր էալ ճթնըկան օսկի մաննին հանեց, գնը ըն մեկեալ դուռը, հոնի աղջիկ մի կա, անքան աղկեկ, անքան աղկեկ՝ աշխարքի էրեսը չգտնվիր: Տղան կըճկավ, աղջկա էրեսը պագեց:

Աղջիկը արթըցավ, հայավ՝ առիքը պաշլայեց ճոճալը:

Աժդահար մի մերմեր սունն ի վեար պլլվեր կէջնա:

Տղան խանչարը քաշեց, զարկեց աժդահարի շնչոցը քոքուն, թա բռնած տեղը գնը մերմեր քարի մեջ:

Դարձավ էկավ կրակը առավ, գնը ծերունին հասավ:

- Բարև, հալվոր, - ըսը:

- Աստծու բարին, - ըսը:

- Քանի՞ սահաթ կա լուսնալու:

- Էրկու սահաթ:

- Սկա դե չայիրը քանի՞ սահաթ է:

- Էրկու սահաթ:

- Պապա՛, շնորհակալ եմ քու միներ:

- Դու կըսիս «շնորհակալ իմ», ես էլ կըսիմ՝ շնորհակալ իմ:

- Ինչո՞ւ համար, պապա՛:

- Կեղծավո՛ր, ափուցս կծիկը առիր, նետեցիր, գիշերը էրկնցավ, թռչունները բուներուն վրուն էլան. գեալերը թռչուն չմնը՝ կերան, աղվեսները հավ չմնը՝ կերան. գեալերը օխչար չմնը՝ ջարդեցին, արջերը մարդ չմնը՝ խեղդեցին. գոմշները էլան օլրտիլ, իրարու հետ կռիվ ինիլ. գողերը ծի չմնը՝ տարին. էգի չմնը՝ խաղողը քաղեցին, էգուն տերը մորթեցին, աղջիկ չմնը՝ փախցուցին, փախցնող տղաքը մորթեցին: Մեշի միջու մարդիկը հանգիստ չէղան, էլան իրար կոտորեցին: Գարշելի՛ տղա, դու իմ գլխու էադ ինչ փորձանք էր՝ բերիր, տուն չմնը բացին, խուզի չմնը՝ տարին կերան: Գարշելի՛, ածուք չմնը՝ թալլեցին, արջերը, սիրուն չմնը՝ տարին: Գարշելի՛ տղա, վեր մեկը քիզի ըսիմ:

- Պապա՛, վե՞ր տեղ տարին:

- Կեղծավո՛ր տղա, չորս հատ սիրուն հարս, գիշեր օ շատ էրկընցավ, էլան ըսին. «Լուսիկ լոս է, էրթը բանջարը»: Էլան գընցին: Արջեր տեսան ըդոք շատ աղկեկ ին, տարին: Գարշելի՛ տղա, դու չե՞ս գիտեր՝ արջը հակառակ է իսանին: Քիզի տեսնըմ, գարշելի՛ տղա, ղոչախուքինդ իմ վրա՞ էր. դե՛, դե՛, արջերու մաղարան հանդիկ է, գնա, հայիմ, ի՞նչ տ'ինիս:

Պապան տարավ ցունց տվեց մաղարի դուռը, տղեն մտավ ներս, ինքը մնը դուռը:

Դռնեն ըսը. - Տղա՛ս, մի՛ վախենար, կծիկը կը քակիմ, գնա ներս, ներսը չորս հարսը կուլան, կաղաչեն, արջեր ըդոց թևերը ճըռվընին խաածած՝ էրեսվնին կծած է. փախչելու ճար չկա:

Տղան թուրը քաշեց, մտավ ներս:

- Մի՛ վախիք, հարսնե՛ր, - ըսը:

Արջերուն անկնճեն բռնեց, բերեց դուս, հալվորին ըսը. - Պապա՛, քիզի մատաղ կինիմ էսոք:

- Էրե, որդի՛, կծիկը քակեր իմ:

- Ահա, պապա՛, հարսները քիզի թեսլիմ կինիմ, կեցիր բարով:

- Էրթըս բարով, եավրո՛ւմ, կեցիր, քիզի խնդիրք մի տինիմ: Չայիրին աղբրին քով օր հասար, վեար դին ծոր մի կա, քառսուն արշուն խորն է. ծերունի մի շալկեր էր էրկու էոլչեք ցորեն. ջաղացքը տ'էրթեր. ասլան մի էկեր՝ ջուր կը խմեր, ասլանը հասավ, փենչե մի զարկեց ըդ հալվորին, շալկով ընկավ հորը. հիմի կը կանչե Աստուծո, տղա՛, գիտե՞ս, ըս ղտի բանը քու էրեսեն ըղավ. էադ հալվորին օր հորի միջուն հանիս, արքայության մեջ կը մննըս: Էրթըս բարի, որդի՛, հեր ինչ որ էրեր էիր ինձի, անցա:

Տղան ընկավ ճանփա, շատ գնըց, քիչ գնըց, հորուն գլոխը կայնավ, կանչեց հորն ի վեար. - Պապա՛, պապա՛:

- Էադ վե՞վ է: Աստծու սիրուն՝ ինձիս հանեք, - ըսըց:

Տղան էջավ օր շալակը տահա հալվորի վրան է. թերս է ընկեր եանի վրա, չկրնըր քակեր: Տղան պարանը քակեց, մեկ ճոթը առավ էլավ հորուն վրա, քաշեց վեր:

- Պապա՛, - ըսըց, - ինչո՞ւ գիշերով ընկեր իս ճանփա, թող լուսնար:

- Ախ, որդի՛, էաս մեկ գիշեր իրեք տարվա պետել էղավ, մի եզ, մի կով ունիմ, տասվերկու հեզ բան իմ տվեր, կինե կը պոռան՝ «անոթի իք, ծարավ իք»: Կովը կը պոռար, էշը կը զռար, հավը կը գուռգուռար, խորոզը կը կանչեր, փիսիկը կը նավեր, շունը կոռնար, ձինը կը հռհռար, գոմեշը կը պոռար, պիթուն կըսեին՝ «մեք անոթի իք»:

- Մնըս բարի, պապա՛:

- Էրթըս բարի, որդի՛, քու աղեկութինը շատ էղավ, քարնը էրթս՝ էառջիդ կանանչ գա, պաղնը էրթս՝ էառջիդ կանանչ գա, պաղնը էրթս՝ էառջիդ հասուն խաղող գա, աղբիրնը էրթս՝ ջուրը էառջիդ օսկի կըյրվի: Աստված սելամեթ տա, եավրո՛ւմ:

Հարամ քեահեասին ընկավ ճանփա, գնըց հասավ օ աղբըրտանքը պարկուկ ին, կրակնը(լ)* վառեց, վրան չորցոց, ձիանը թիմարեց, էկավ, կերակուրնը(լ) տեսավ (պատրաստեց), կանչեց աղբրտոցը օ ինքը քնավ:

Աղբրտանքը ըսին. - Էլլըք մորթիք մեր պուճուր աղբորը:

Օրթանճա աղբեարը ըսըց. - Աղբեարնը աղբորը կը մորթե՞, տի մորթիս նը՝ քնուկ թողիք, էլլըք էրթըք:

Էլան ձինը հեծան, չգիտցան վեր մեկ ճանփով տ'էրթան, տնկվան լեառն ի վեր, էլան գլոխը: Գրցին օր ըդ լեառան գլոխը սարայ մի կա մեր-մեր քարե շինած, պետենին տակ աղբիր մի կա, աղբրի վրա էջավ, ձիանը

---

* Այսպես է բնագրում (ծ.կ.):

ջրեցին՝ իրանք էալ կերան, խմեցին. անքան հայան օր աղբեարնը էկավ, հասավ:

Ըսին իրարու. - Միք էաս տղին ափուցը չըք կրնըր ազատիր:

Գաք էան թագավորին, օր ընու պետենի տակը տղան դևերը սպանեց:

էան թագավորը դալալ կը կանչե. - Վեվ օ էկավ, մերմեր քարեն խանչարը քաշեց նե՝ աղջներս ընու կուտամ:

- Վեզի՛ր, - ըսըց, - քեռշե պուճախ հայիր, մարդ չմնը՞ց:

Վեզիրը ըսըց. - Պետենին աղբիրը իրեք հատ մարդ կա:

Կանչեցին. գնըց, գլոխ տվեց թագավորին:

Թագավորը ըսըց. - Խաթերս համար խանչարը քաշե:

Քաշեց, տեղացը չթնդաց խանչարը:

Օրթանճան կանչեց, ընի քիչ մի թնդացոց տեղացը:

Թագավորը շատ խնդաց, օր դուրս չէկավ՝ շատ մտածեցոն մեջ մնըց, ըսըց. - Տահա մարդ չմնը՞ց:

- Տահա մարդ չմնըց, մե մի մնըց, ծիանու քովն է, - ըսըց վեզիր:

Հարամ քեահեասին կանչեցին, գնըց, խանչարը տեսնալուն քիմին միտքը ընկավ, քաշեց, հանեց:

- Որդի՛, մուրազդ ուզե, - ըսըց թագավորը:

- Իմ մուրազս քու սաղութինդ է:

- Որդի՛, աղջիկս էալ տի տամ քիզի, թագավորութինս էալ:

Տղան կանչեց աղբրտոցը, ըսըց. - Դուք ինձիս հետ գլոխ չունիք, ես հոս տի մնամ, մենծ քուրուրտանքը քու խսմեթդ է, մենծ աղբեար, առ, գնա՛, օրթանճա աղբեար, դուն էալ օրթանճա քորը առ տա՛ր:

էրկու աղբեարները առին էրկու աղջները, թագավորը խարճլուխ տվեց, ծգեց ճանփա:

Իրեք ավուր ետև թագավորը ըսըց էաս տղին. - Աչքս բաց իքեն քիզի տի կարգիմ:

Հեարսնիք ըրըց, տղեն ու աղջիկը պսակեց:

Իրեք ամիս մնըց, գարնան հատաղին էր, ամառ մտուն շատ շոք էր. թագավորը աղջիկն ու տղեն առավ գնըց եայլա. գցին հասան լեառան գլոխը, լեառան վրա մի սահաթվա տեղ դեոր է, չորս դին ջուր է, օրթալախ տեղ չոր է, չոր տեղ սարայ է շինած, գցին մտան էադ սարայը:

Թագավորը քեյֆը ավրեց, վեց օր ապրավ ու մեռավ:

Տարին հող ու գերեզման էրին:

Աղջիկն ու տղան մի ամիս մինակ մնացին:

- Թագավորի աղջի՛կ, - ըսըց տղան, - քու էրեսդ չխնդար, ես կանցնիմ կէրթըմ ծովու վրուն, դու կարմունջին դուռը գոցե:

Տղեն էլավ կարմնջեն դուրս. աղջիկը մնըց ներս:

Տղան ընկավ ճանփա, գնըց մեկ մորիի հասավ, տեսավ հոտի կաքվընին կը կարկնչեն, տղան ճղներ կոյրեց, շինեց մեթերիս մի, ինքն էալ կաքավու պես կարկնչեց. կաքվընին էկան մեթերիսին առաջ, տղան նետեց, հինգ հատ զարկեց:

Առավոտուն կինե ընկավ ճանփա մորին, հոնի արտ մի կար ցորենի, մեջը շատ կաքավ կար քեսեթերը դրըց իրարու վրա մեթերիս շինեց, նետեց էրկու հադ զարկեց:

«Հերիք է, վե՞վ է ուտողը», - ըսըց:

Ընկավ ճանփա, հայավ օր արտի մի մեջ, քեսկիմ տակ, ինք թիզմն է, մորուքը էրկու թիզ, նստած է: Առավ հետը, մտածեց. «Տանեմ թագավորի աղջկան՝ օ էկլենմիշ ըլլի»:

Գնըց հասավ կարմունջը, իրեք հեղ դուռը զարկեց, թագավորին աղջիկը էկավ դուռը բացեց, տղան ընի ղոլթղին տկուն էջոց թագավորին աղջկան առաջ. - Ահան, - ըսըց, - քու ակլանճեդ:

- Չիմ ուզիր, չիմ ուզիր, - ըսըց, - սեապե թող էրթա:

- Չեղած բան է, ես քիզի համար բերեր իմ:

- Չեառոքդ տունդ քակեցիր, ըդոր Կրակոտ Ոսպ կըսեն:

- Ըդի ի՞նչ է, օր ես ըդոր միներ վախենամ, - ըսըց:

Առավոտը տղան բերավ եոթ արշում էրկըթե լինք մի, զարկեց գետին, բերեց Կրակոտ Ոսպին ծեռվընին կապեց զնճիլով, մեկ ճոթն էալ կապեց ծառին, գնըց ավը:

Տղան անճախ հասավ մեշեն. Աթաշլի մերճիմեք հայավ աղջկան էրեսն ի վեար, կեսը գնըց, մաշեցավ, ըսըց. - Ես իմ ղուվեթս քու էրկեանդ ցունց տի տամ:

Հե մի ոտքը զարկեց գետինը, թռավ վեր, կըյրեց զենճիլը. ծառը քոքուն կորզեց, առավ գնըց իրա փիճին վրա դրած:

Տղան իրիկունը էկավ, հայավ ըն բերած Կրակոտ Ոսպն ու թագավորի աղջիկը չկան: Խենթըցավ. իրեք օր կուլար ու կօլըրտեր ծովուն մեջ աղջկան տերտեն՝ ձինը մտացը գցեր էր. անոթի իրեք օր հռհռաց:

- Վա՛յ, - ըսըց, - ես իմ ձիու մի մազը չեմ իտար թագավորին էլքեին:

Ձիուն բան տվեց: Ձին լեզու էլավ, ըսըց - Ինչո՞ւ թագավորի աղջկան մտիկ չըրիր. «կեթտի դեմեք օլմասն»*:

Տղան ձիու փորը կշտացոց, թաթար-թիմարիմ տվեց. այարը վրան զարկեց. էլավ հեծավ, ընկավ ճանփա: Տասվերկու սահաթ քշեց, հասավ մեկ էքթ ղոնախ մի, ձինը հռհռաց. ղոնխին խանըմը պեսլեմին ըսըց. - Հայիր, վե՞վ է կուգա:

Էլավ դուրս հայավ, օլրվավ, մտավ ներս, ըսըց. - Էնանկ ձիով մի կուգա օր ըսիս քի մի մոր մինե իք, մի խնձոր օր կիսիս, էրկուքնիդ էալ մի մոր մինե էղած ըլլիք:

Խանումը փափուճնին էալ չհագավ, բոբլիկ վազեց դուրս՝ տեսավ աղբեարն է, ընկավ շնլին:

Տղան ըսըց. - Ո՞ւր է գցեր փեսան:

- Ավն է գցեր, հիմա կուգա:

Փեսան էկավ. - Հա՛յ բարև քիզի, բարի էկար, հազար բարի:

Տղի սիրտը տոլուխմիշ էղավ, չկրցավ առներ բարևը:

Դարտին իմաց էղավ դերվիշը, ըսըց. - Վաղն էկո, չիս կրնըր ձեառք ձգեր, ընի Կրակոտն Ոսպն է:

- Չըլլիր, տ'էրթմ ետին, տի բերեմ:

- է, ձինդ կը քշես, կէրթըս օրթանճա աղբորս տունը, թե ճանփա մի հանեց, ան տի հանե, - ըսըց:

Գնըց օրթանճա աղբորը տունը, էան էալ ընու պես ճանփեց պզտիկ աղբորը տունը: Պզտիկ աղբեարը ըսըց. - Հա՛յ Հարամ քեահեասի, բարով, հազար բարով, քոր մի ունեիր, «գոյտն սափան դաշընա աթտըն»**:

Տղան ըդու էալ գլխուն գալածը ըսըց:

Ըդի էալ ըսըց. - Կրակոտ Ոսպի տունը ծովու մեջտեղն է, տասվերկու դաթ է, մերմեր քարով. քիրեճ խորասանով շինած է: Էրդիկ ու դուռ չկա, մի փենճերե կա, ո՞ւր տի էրթս:

- Չըլլիր, տ'էրթմ, - ըսըց, - էլավ ընկավ ճանփա:

Գնըց հասավ ծովուն քնարը, զարկեց ձինը ծովը, գնըց հասավ սարայը, չորս դին օլրտավ՝ դուռ չկա, էրդիկ չկա, տարվեր հայավ, մի փենճերե կա. տեսավ օ աղջիկը վերի դաթը մի ճնճղա պար կէրևա, տղան պոռաց. - Բռնածդ ի՞նչ է, պարան նապե, էջիր:

Աղջիկը պարան կապեց. էջավ, տղան հանեց ծովուն քնարը:

---

* Դրիր պարսնետ ու ձգեցիր (թուրք., ծ.բ.):

** Անասելի, անդառնալի կերպով գնաց (թուրք., ծ.բ.):

Չինը հոտ տղուն հետ զրուցեց. - Կրակոտ Ոսպ տասն ավուր ճանփա հեռու է, ինձիս զանկու զարկ:

Տղան զանկուն զարկեց. զանկուստանը ձիու փորուն մեջ իրուր դպան: Կրակոտ Ոսպ շատ լսուկ էր, որ տաս ավուր ճանփա մե մի խոսեր, կը լսեր. զանկուստաննու ձեանը լսեց. հասկցավ օ աղջիկը տարին. օտքը զարկեց գետինը, թռավ էլավ լեառան մի գլոխ, աչքը շատ լուսոտ էր, տեսավ տղան մրչիմի պար կէրևա աչիցը, առեր է աղջիկը, կէրթա. օտքը զարկեց գետինը, թռավ տղուն առաջը կըյրեց:

Քաշեց տղան թուրը, ընդին անցավ գլոխը կըյրեց, ըոդին անցավ, կըյրեց: Ընի կը կըյրեր, Կրակոտ Ոսպ կինե կը թոփվեր, սաղնար, կէլլըր օրթաճ, ըդոր մեռնիվ չկար: Տղան զարկեց, զարկեց, խոնջըցավ, թևերը թուլցավ, մնըց:

Կրակոտ Ոսպ տղուն ափուցը թուրը առավ, զարկեց, կըյրեց գլոխը, դրեց ձիու վրան, մի սիլլե զարկեց սարդիին, օր տասվերկու սահաթ ձինը եան կէրթըր, էանքան օր զոռլի զարկեց:

Չինը գնըց, հասավ տղի քրոջ տունը, հռհռաց:

Քորնը ըսըց. - Աղբեարս էկավ:

Էլավ հայավ օ ձին է, պաշլայեց լացը:

Խուրճինը վեար առավ, հայավ օ աղբորը գլոխը կրյրմուն է:

- Մի՛ լար, թագավորի աղջիկ, - ըսըց դերվիշը, - ես ճանավարնուն թագավորն իմ, ճարը կը գտնիմ:

Կանչեց թռչուններուն սեղնարին, ասլահին, ինչ օր ճանավար կա, թոփեց, ըդոց լեզուն կը հասկնար, ըսըց. - Սըվու չարեն:

- Թագավո՛ր ապրած, - ըսըց զմրութ ղուշ, - ըդոր չարան աշխրքի էրեսը մի Չեչել-քերքեզ կա, ան գնա, ընի Աստուծո ստեղծածն է: Տահա չէ մեռեր:

- Տ'էրթըս, բերըս, - ըսըց դերվիշ:

Զմրութ ղուշ գնըց գտավ. հայավ փետուրը թափեր, մերկ, քնքուշ հողուն մեջ պառկեր է, մխտեց, էլավ վեր:

- Թագավորը քիզի կուզե, Չեչել-քերքեր, - ըսըց:

- Աստված պապան օր ինձիս ստեղծեր է, քանի հազար տարի է մի բան չընկավ, չուզեց ընձիս մի թագավոր էալ. ըսօր ինչո՞ւ տի ուզե, ես չիմ կրնըր գար, խանատ չունիմ:

Զմրութ թռչուն էկավ:

- Շատ հալվոր է, - ըսըց, - վրուն պունպուլը թափվեր է, մարմինը տկլոզցեր է, չկրնըր գար:

Կանչեց թռչուններուն, էկան, գլոխ տվին:

Ըսց. - Աղոթք էրեք օ Չեչել-քերքեզին պունպուլ գա:

Իրեք սահաթ Աստուծո աղոթք էրին, Աստված լսեց, պունպուլ էկավ Չեչել-քերքեզին վրան, գըցին առին էկան:

էկավ, գլոխ տվեց թագավորին:

Մեռած տղեն դրեց էառջին:

- Աըվոր չարեն, - ըսըց:

- Ըդոր չարեն Աստված է, - ըսըց Չեչել-քերքեզ: Կը մորթես գոմեշ մի, տիկ կը հանես, կը լընըս գինի, միսը ղավուրմա կինիս:

Թագավորը կատարեց ղուշին խոսքը:

Չեչել-քերքեզ շալկեց, առավ թևերու վրան գինին ու ղավուրման, կոլրվեր ու կը բարսընար վեր-երկինք, էաս դին կը դառնար, գինի կը խմեր. անդին կը դառնար, միս կուտեր:

Գելանը ըսըց. - Թագավոր ապրած, էադ ղուշը մաղարան անոթի կը սատկեր. գոմեշն ու գինին առավ էլավ, կէջնա տեղ մի կուտե, քիզի էալ չխափե՞:

Թագավորը հերսոտավ:

- Խարդախութին մի՛ ծգեր, - ըսըց:

Ինը խաթ է էրկինքը, էլպվ մեկ խաթը, արևին մոտեցավ. արևը անցնելուն քիմի գլոխը էարավ. գլոխը կոխեց գինու մեջ, բարսըցավ արևի վրա, իրեք սահաթ արևեն բարսըցավ. ընկավ սառոցը, ցուրտ տեղը, շատ զարմանալի ցուրտ է: Իրեք դասը անցավ, դեորտյունճի դասը կայնավ: Աստված հրեշտակը ճանփեց. էկավ տեսավ Չեչել-քերքեզին գլոխը էարած է:

- Ի՞նչ կա, Չեչել-քերքեզ:

- Աստված պապային խնդիրք մի ունիմ:

Հրեշտակը դարձավ Աստված պապային դիվանը. հինգ տրեմ պուճուր շոշե մի լեցուկ, հստակ. անմահական ջուր տվեց. բերեց Չեչել-քերքեզին, օր առավ էջավ, բերեց թագավորին քով, թագավորը առավ, Չեչել-քերքեզի գլոխը հայավ, օր էարեր էր, ըսըց. - Չեչել թագավոր, սաղ գցիր, եարալի էկար:

- Թագավո՛ր ապրած, - ըսըց, - մեկ դասը կրակ է, մեկ դասը սաստիկ ցուրտ է. մեկ դասը աժդահար է, մեկ դասը օձ ու կարիճ է. դեորտյունճի չորս դասը զոռով մտա ես. Աստված պապան ինձիս խնայեց, խոսքս կատարեց, ետ դառոց:

Էրկու շուշե դեղ բերած էր, մեկը ճերմակ, մեկը կարմիր, ճերմակը հոգին էր, կարմիրը՝ էարինը, ուր օ եարալի էր, կարմիրը կը զիներ. ճերմակն էալ վրան կը քսեր: Տղան սաղցավ, էլավ նստավ:

- Չինս քաշեցեք, ես տ'էրթըմ, - ըսըց:

- Ո՞ւր տ'էրթըս, իրեք ամիս է վելվելեն իս ձգեր աշխարք:

Չեչել-քերքեզ ըսըց. - Ես օ ըսու չարեն չգննըմ, մարդ չգննըր. էաս գլոխս էարեցի. էաս հեղուն շնլիս կը զինիմ:

Էլավ տղան փիճեց. էլավ էրկինքը, տարավ Կրակոտ Ոսպի լեառը. էադ Կրակոտ Ոսպը տասվերկու գլոխ ուներ, լեառան գեմշու կոտոշին մեջ շուշե մի կար, հոգին ընու մեջ էր:

Չեչել-քերքեզ ըսըց. - Քանի՞ խանչարով կընըս գլոխը կըյրեր:

- Էրկու խանչարով կը հանիմ:

Գցին, էջան աղբրին վրան. ջուրը դառուցին, գեոլը պարպեցին. եոթ տարվա գինին լցին:

Ճաշվա շոքուն տեսավ գոմեշնը էկավ, խմեց, խելքը գնըց:

- Ավտորցի՛ր, թագավորի՛ տղա, - ըսըց Չեչել-քերքեզ, - ի՞նչ կենիս. թեզ, հիմա Կրակոտ Ոսպ միզի կը հասնի:

Տղան խանչարը քաշեց էրկու խանչարով հանեց. ձեառք նետեց շուշին, բացեց օր տասվերկու հատ մեղու. աչվընին դեղին, ճակատնին կարմիր, շնլին դեղին, մեջքը կարմիր, ոռը դեղին, ասեղի պար պիզ ուներ, բռնեց, մեկիկ-մեկիկ ջարդեց:

Կրակոտ Ոսպը հասավ. - Տասը ջարդեցիր, էրկուքը մի՛ ջարդեր:

Մեկին գլոխն էալ կըյրեց:

- Կը խնդրվիմ քինե. էադ մեկը թող, մի՛ կըյրեր, հավու մի պար ղուվաթ չմնըց իմ վրա:

Տղան խեղճըցավ. սեապեց:

Մեղուն պզպըզալեն գնըց Չեչել-քերքեզին:

- Դո՞ւ ես ըս մարդը սաղցնողը, - ըսըց. գնըց գլխուն վերև օր խեթեր:

Տղան հասավ, ընու գլոխն էալ քաշեց:

Չեչել-քերքեզ տղան առավ փիճին վրա, գնըց Կրակոտ Ոսպի սարային վրա պտըտեց. հայավ նե դուռ կա, նե էրդիք, փենճերեն մտավ ներս, օ պատերուն միջի դին մի սրա քարը ալմաստ է, մի սրան՝ օսկի, աշխրքին էրեսը չգտնվիր դրախտի լման է:

Տեսան օ աղջկան գլոխը խելք չկա, մի տամար մինակ կը թնդա:

Ըսըց. - Էլի՛ր, թագավորի՛ աղջիկ, քիզի համար շատ չարչարվեցա:

Տղան շատ մտածոց մեջ մնըց:

Չեչել-քերքեզ ըսըց. - Տ'էրթըմ, դեղ տի բերեմ:

Տղան ձեառք նետեց շնլին, օտվընին պագնեց:

- Քիգի շատ կաղաչեմ, ինձիս հոսի մի թողուր:

Չեչել-քերքեզ էլավ գնըց, քառսուն խաթար դեվե, ամեն խաթարը քառսուն դեվե առավ էկավ, աղջկան ու տղուն հանեց ծովուն դուրս: Ինչ որ օսկի, ալմաստ քար կար, տարավ անցոց ծովը. բարձան դևեներու վրա, ընկան ճանփա, ժանկուռ-ժունկուռ, գընցին հասան, դերվիշ թագավորին ղոնախ էղան իրեք օր:

Էլան ընկան ճանփա, շատ գընցին, քիչ գընցին, միան Աստված գիննա, հասան օրթանճա դերվիշի տունը:

Կերան, խմեցին, գընցին, հասան մենծ դերվիշի տունը:

Առավոտը կինե ընկան ճանփա, գցին հասան իրանց երկիրը:

Հարամ քեահեասին խապար ճանփեց աղբընտոցը:

Աղբեարտանքը հազար մարդով էկան դեմ:

Գցին սարայը, եոթ օր, եոթ գիշեր հեարսնիք էրին:

Էնոք հասան իրանց մուրազին, դուք էալ հասնիք ձերը:

Էրկնուց էջավ իրեք խնձոր, մեկը ինձի, մեկը ըսողին, մեկն էալ Մինասին: